« Վանաձորի Գրիբոյեդովի անվան թիվ 11 ավագ դպրոց» ՊՈԱԿ

<<Պատմության>> , << Հասարակագիտության>> ,
<< Հայ եկեղեցու պատմության>> ,<<Աշխարհագրության>>
մեթոդմիավորման

2022-2023 ուստարվա

# ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Մեթոդմիավորման նախագահ________________/ Լ. Միրզոյան

2022-2023 ուսումնական տարվա ընթացքում մասնախմբի անդամների կողմից նախատեսված են ինչպես ընթացիկ պարտադիր , այնպես էլ այլ աշխատանքներ , որոնք նպատակ ունեն իրականացնելու հանրակրթության հիմնական խնդիրները , ուսումնական ծրագրերը և դրանցից բխող կրթադաստիարակչական այլ նպատակներ , որոնք ուսուցիչների առջև դրվում են նաև Հանրակրթության պետական չափորոշչով : Անհրաժեշտ է հաշվի առնել նաև փաստը , որ 2023թ-ից ուժի մեջ է մտնում Հանրակրթության Պետական նոր Չափորոշիչը : Աշխատանքները լինելու են բազմաբովանդակ , ինչպես միշտ : Դրանց տեսակներն են .

ա- զեկուցումների ընթերցում

բ- մրցույթների և ծրագրերի մասնակցություն

գ- ներդպրոցական և տարածաշրջանային , այդ թվում օն-լայն օլիմպիադաներին մասնակցություն

դ- պատի թերթերի և հոդվածների հրատարակում

ե- հասարակական և հանրօգուտ ակցիաների մասնակցություն

զ- հանդիպումներ ՀԿ-ների , անվանի մարդկանց , մասնագիտական կողմնորոշմանն աջակցող մասնագետների և այլ գործիչների հետ

է- հնարավորության դեպքում դատական նիստերի կամ այլ իրավագիտական-հասարակագիտական գործընթացների մասնակցություն

ը- առարկայական նախասիրական խմբակների , այդ թվում նաև օլիմպիադաների նախապատրաստական կազմակերպում

թ- առարկայական ծրագրերի կատարողականության դիտարկում / տարեկան երկու անգամ /

ժ- բանավեճերի և քննարկումների կազմակերպում

ի-տեղեկատվական բազայի ստեղծում

լ-համագործակցություն ներդպրոցական կառույցների /աշխարհուրդ , առարկայական խմբակներ / հետ

խ- ՀԱԵ և ՀԱԵ Գուգարաց թեմի հետ համագործակցության ապահովում , ուխտագնացությունների կազմակերպում :

ծ-2023թ ներդրվող Հանրակրթության նոր չափորոշչի և առարկայական ծչագրերի ուսումնասիրություն

կ-բնապահպանական , համայնքային ծրագրերին մասնակցություն

Մեթոդմիավորման աշխատանքների արդյունավետության ապահովման նպատակով պարբերաբար / յուրաքանչյուր ամիսը մեկ , իսկ անհրաժեշտության դեպքում նաև՝ արտահերթ / կիրավիրվեն մեթոդմիավորման նիստեր , կքննարկվեն առաջացած և ընթացիկ հարցերը : Նախատեսվում են էքսկուրսիաների , դիտողական արշավների և հանդիպումների կազմակերպում :

Ուսուցիչների մեթոդական հմտությունների հարստացման և ձեռքբերման նպատակով ուստարվա ընթացքում ևս նախատեսված են փոխադարձ դասալսումներ՝ըստ ուսուցիչների ծանրաբեռնվածության , մեթոդական-փորձարարական դասեր ոչ միայն առարկայական միամսյակի , եթե այդպիսիք կպլանավորվեն , այլև ողջ ուստարվա ընթացքում :

## Տեղեկություններ մեթոդական միավորման կազմի մասին

| | Ազգանուն, անուն | Կրթություն | Առարկան | Աշխ. ստաժ | Դասարանները | Դասաժամ. քան. | Տարակարգ | Մանկավ արժ. Խորհրդի անդամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Միրզոյան Լ. | բարձր. | Պատմություն ,հասարակագիտություն | 24 | 10-12 | 28 | կա | Դասղեկ |
| 2 | Թադևոսյան Լ. | բարձր. | Պատմություն | 26 | 10-12 | 29 | կա | Դասղեկ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ,հասարակագիտություն | | | | | |
| 3 | Բարիկյան Ն. | բարձր. | Պատմություն<br>,հասարակագիտություն | 13 | 10-11 | 11 | կա | |
| 4 | Վալեյկո Ե. | բարձր. | Պատմություն<br>,հասարակագիտություն, ՀԵՊ | 21 | 10-12 | 29 | կա | Դասղեկ |
| 5 | Ավագյան Ս. | բարձր. | աշխարհագրություն | 20 | 10-12 | 32 | կա | Դասղեկ |
| 6 | Բոշյան Հ. | բարձր. | աշխարհագրություն | 24 | 10-12 | 8 | կա | |
| | | | | | | | | |

# Ծրագրեր և դասագրքեր

| № | Աշխատանքի բովանդակությունը | Ժամկե<br>տը | Կատարող | Նշում |
|---|---|---|---|---|
| 1 | **Դասագրքերի քննարկում.**<br>1. Նպատակահարմար է այս ուսումնական տարվա ընթացքում հիմնական ուշադրությունը դարձնել պատմության դասագրքերում որոշ թեմաների բովանդակային ներկայացմանը ՝ հաշվի առնելով նաև արդի զարգացումները , մասնավորապես՝ ՀՀ նորագույն պատմության և արդի ռազմավարական խնդիրներին<br>2.Աշխարհագրություն / ուսուցիչների առաջարկությամբ /<br>3. Համագործակցություն ԴՇՇՀ-ի հետ | Տարվա<br>ընթացք<br>ում | Առարկայական<br>մեթոդմիավո<br>րում | |
| 2 | **Ծրագրերի, թեմատիկ պլանավորումների քննարկում և հաստատում.**<br>1. ծանոթացում պետական չափորոշչին,այդ թվում՝ 2023թ-ից ներդրվող առարկայական և հանրակրթական նոր չափորոշիչներին և ծրագրերին : Հատուկ ուշադրության պետք է արժանացնել Հայոց պատմության նոր դասագրքերը , որոնք փորձարկվում են ՝ դիտարկելով հնարավոր բովանդակային փոփոխությունները՝ կապված ՀԵՊ առարկայի ինտեգրման հետ :<br>2. ծանոթացում առարկայական պետական չափորոշչին,<br>3. ծանոթացում պետական ծրագրերին<br>4.ծանոթացում նոր ուստարվա մեթոդական նամակներին<br>5. ծանոթացում <<Հայոց պատմություն >> և <<Հայոց եկեղեցու պատմություն >> , << Հասարակագիտություն >> , << Աշխարհագրություն >> առարկաներից սովորողների ընթացիկ գնահատման նյութերի փաթեթին,<br>6. թեմատիկ պլանների կազմում, քննարկում և հաստատում,<br>7. առաջին կիսամյակում ծրագրերի կատարման ստուգում / երկու անգամ յուր կիսամյակում կամ ըստ մանկավարժական խորհրդի որոշման /<br>8. տարեկան ծրագրերի կատարման ստուգում / փոխադրական և ավարտական քննաշրջանից հետո<br>9. արդյունքների ամփոփում | Օգոստո<br>ս-<br>Սեպտ.<br><br>Փետրվ<br>ար-<br>մարտ<br><br>Մայիս<br><br>Հունիս | Առարկայական<br>մեթոդմիա<br>վորում ,<br>ուսումնական<br>գծով<br>փոխտնօրեն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |

## Դասալսումներ և բաց դասեր

| № | Աշխատանքի բովանդակությունը | Ժամկետը | Կատարող | Նշում |
|---|---|---|---|---|
| 1 | դասալսումներ.<br>ա/փոխադարձ դասալսումներ ըստ մմ նիստին պլանավորած նվազագույն քանակի /համապատասխան գրանցումներով/,<br><br>բ/ Առարկայական և այլ մեթոդական , փորձարարական բաց դասերի անցկացում և դիտարկում | Տարվա ընթացքում<br>Տարվա ընթացքում | Տնօրեն, Փոխտնօրեն, մեթոդմիավորման նախագահ, ուսուցիչներ | Հաշվի առնելով ուսուցիչների ժամային ծանրաբեռնվածությունը՝ մանկավարժական խորհրդին առաջարկվել է մմ ուսուցիչների համար սահմանել դասալսումների տարեկան 10 ժամ սահմանը |
| 2 | Թեմատիկ դասերի կազմակերպում<br>1. համադպրոցական բաց դասեր:<br>2. Արտագնա , բաց , մեթոդական կամ գործնական դասեր | Տարվա ընթացքում | Մեթոդմիավորման նա-խագահ, անդամներ | Մեթոդական , նախագծային , փորձարարական դասերի ժամանակացույցը և անցկացման կարգը կորոշվեն ուսումնական գծով փոխտնօրենի հետ քննարկման արդյունքում |

## Մեթոդամանկավարժական աշխատանքների քննարկումներ

| № | Աշխատանքի բովանդակությունը | Ժամկետ | Կատարող | Նշում |
|---|---|---|---|---|
| ա | Մեթոդմիավորման աշխատանքների պլանավորում և կազմակերպում | օգոստոս, սեպտեմբեր | Մասնախմբի ղեկավար | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Մասնախմբի առարկայացանկին վերաբերող նոր գրքերի,պարբերականների և առանձին հոդվածների քննարկում, ուսումնաօժանդակ նյութերի ձեռքբերման , կարիքների մշակման աշխատանքների անցկացում : Համացանցի տարբեր կայքերի նյութերի ուսումնասիրություն: | Ուստար վա ընթացքո ւմ | Մեթոդ միա վորման նա- խագահ, անդամ- ներ | |
| գ | Մասնախմբի առարկաների վերաբերող մեթոդական հարցերը , մեթոդական նամակները քննարկել մմ անդամների հետ : | Սեպտեմ բեր Հունիս | Մեթոդ միա վորման նա- խագահ, անդամն եր | |
| դ | Անհատական խորհրդատվություն դասավանդման և այլ խնդիրների վերաբերյալ: | Տարվա ընթաց քում | Մեթոդ միա վորման նա- խագահ, անդամ ներ, | |
| ե | Առարկայական միամյակի աշխատանքային պլանի քննարկում և ներկայացում տնօրենությանը | Հոկտեմ բեր | Մեթոդ միա վորման նա- խագահ, անդամ ներ | |
| զ | Դասավանդման նոր մեթոդների քննարկումը և կիրառումը: | Տարվա ընթաց քում | Մեթոդ միա վորման անդամ ներ | |
| է | Ավարտական և փոխադրական քննությունների նախապատրաստման գործընթացի կատարելագործում, աշակերտների գիտելիքի մակարդակի բարձրացում: | Տարվա ընթաց քում | Մեթոդ միա վորման անդամ ներ | |
| ը | Միջառարկայական կապերի օգտագործումը պատմության և աշխարհագրության դասերին: | | մ/մ նիստերի ժամա նակ | |
| թ | Համացանցի առարկայական –մասնագիտական , պաշտոնական –իրավական և այլ կայքէջերի, մասնագիտական ամսագրերի և թերթերի նյութերի ուսումնասիրում և քննարկում | Ուստար վա ընթաց քում | Ուսուցիչ ներ | |

# Ստուգումներ

| № | Աշխատանքի բովանդակությունը | Ժամկետը | Կատարող | Նշում |
|---|---|---|---|---|
| ա | Թեմատիկ պլանների ստուգում , դրանցում անհրաժեշտ փոփոխությունների կատարում | Ըստ անհրաժեշտության | Մմ նախագահ, առարկայի ուսուցիչներ | |
| բ | Ծրագրի կատարողականի ստուգում | Դեկտեմբեր , մայիս | Մեթոդմիավորման նախագահ | |
| գ | Ավարտական և փոխադրական դասարանների քննությունների նախապատրաստական աշխատանքների կազմակերպում և արդյունքների ստուգում : | Մայիս Հունիս | Տնօրենություն, մեթոդմիավորման նախագահ, առարկայական ուսուցիչներ | |
| դ | Օլիմպիադայի դպրոցական փուլի անցկացում | Դեկտեմբեր | Մեթոդմիավորման նախագահ, անդամներ | |
| ե | 120-200 ժամ բացակայած աշակերտների համար քննական նյութերի նախապատրաստում: | Մայիս | Փոխտնօրեն, մեթոդմիավորման նախագահ, ուսուցիչներ | |
| զ | Այլ պետություններից տեղափոխված / և կամ կրթական այլ ծրագրով սովորած / աշակերտների գիտելիքների ստուգման առաջադրանքների և նրանց հետ անհատական պարապմունքների կազմակերպում | Ըստ անհրաժեշտության | Փոխտնօրեն, մեթոդմիավորման նախագահ, անդամներ | |

| № № | Աշխատանքի բովանդակությունը | Ժամկետը | Կատարող | Նշում |
|---|---|---|---|---|
| 1 | Համագործակցություն ՀԿ-ների հետ | Տարվա ընթացքում | ՄՄ նախագահ , ուսուցիչներ | |
| 2 | Վահանակների և պատի թերթերի պատրաստում: | Տարվա ընթացքում | ՄՄ նախագահ , ուսուցիչներ | |
| 3 | Հիշատակի անկյան ձևավորում | Ըստ օրացույցի | ՄՄ նախագահ , ուսուցիչներ | |
| 4 | Մեթոդական հավաքածուի ստեղծում / սցենարներ, ռեֆե-րատներ, մեթոդական ուսումնասիրություններ, տեսա- | Տարվա ընթացքում | ՄՄ նախագահ , ուսուցիչներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | նյութեր, ֆոտոալբոմներ և այլն/: | | | |
| 6 | Այցելություններ մշակութային կենտրոններ ,պատմաճարտարապետական հուշարձաններ | Տարվա ընթացքում | ՄՄ նախագահ , ուսուցիչներ | |

**ՄՄ նիստերին ուսուցիչների մասնագիտական –մեթոդական թեմաներով զեկուցումների ժամանակացույց**

| | Ուսուցիչ | Զեկուցման թեման | Ամիսը |
|---|---|---|---|
| 1 | Միրզոյան Լ . | Աղյուսակների , դիագրամների , սանդղակների օգտագործումը պատմության դասերին | Հոկտեմբեր |
| 2 | Վալեյկո Ե. | Աշակերտների գիտելիքների ստուգման ձևերն ու տեսակները | Մարտ |
| 3 | Թադևոսյան Լ. | Հայկական խաչքարեր . ինչպես ուսուցանել թեման | Փետրվար |
| 4 | Բարիկյան Ն. | Հյուսիսային Բագրատունիներ | Ապրիլ |
| 5 | Ավագյան Ս. | Թեստերի կազմման առանձնահատկությունները | Նոյեմբեր |

Բացի տարեկան պարտադիր աշխատանքներից մեթոդմիավորման անդամների կողմից կիրականացվեն նաև ըստ անհրաժեշտության աշխատանքներ , որոնց մասին կտրվի տեղեկատվություն ամենամսյա և ամփոփիչ հաշվետվություններում : Մասնախմբի ուսուցիչների կողմից կիրականացվեն նաև միջոցառումներ , հանդիպումներ , թեմատիկ այցեր և այլ նախաձեռնություններ :

Լ. Միրզոյան /[signature] /

31.08.2022թ